



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա. Օրոսյան
(անուն, ազգանուն)

« 4 » ապրիլի 2022թ

N 5-ԿՀ հրաման

**Հիմք՝ Հավատարմագրման ազգային
մարմնի հավատարմագրման խորհրդի**

2022 թվականի մարտի 4-ի

N 1/1 որոշումը

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

PL-08

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Նազիկ Արզարյան
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը՝ 04.04.2022թ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ՇԱՀԵՐԻ ԲԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Սույն փաստաթուղթը սահմանում է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) անկողմնակալության, շահերի բախման կառավարման և հավատարմագրման գործունեության օբյեկտիվության ապահովման քաղաքականությունը:

2. «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի նպատակն է ապահովել հավատարմագրման գործունեության նկատմամբ վստահությունը:

3. ԱՐՄՆԱԲ-ը կատարում է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի բոլոր պահանջները և իր կազմակերպական կառուցվածքով ու կառավարմամբ երաշխավորում է հավատարմագրման գործունեության օբյեկտիվությունը և անկողմնակալությունը:

ԱՐՄՆԱԲ-ն իր գործունեության ընթացքում՝

- զերծ է մնում այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են խախտել իր անկողմնակալությունը,

- համապատասխանության գնահատման մարմիններին խորհրդատվություն չի տրամադրում,

- համապատասխանության գնահատման գործունեություն չի իրականացնում և առնչություն չունի այն մարմինների հետ, որոնք խորհրդատվություն են տրամադրում համապատասխանության գնահատման ոլորտում,

- կազմակերպում է դասընթացներ մասնակցել ցանկացող բոլոր շահագրգիռ կողմերի համար,

- չի իրականացնում հատուկ դասընթացներ կոնկրետ համապատասխանության գնահատման մարմնի համար:

5. Անկողմնակալության քաղաքականությունը հասանելի է հավատարմագրման գործընթացում ընդգրկված ողջ անձնակազմի, հայատատուների, շահագրգիռ մարմինների համար և տեղադրված է www.armnab.am կայքում: Հավատարմագրման գործընթացում ներառված գնահատողները, տեխնիկական փորձագետները և հավատարմագրման կոմիտեների, հանձնաժողովների, խորհրդի անդամները ստորագրում են անկողմնակալության և գաղտնիության մասին հայտարարագիր:

6. ԱՐՄՆԱԲ-ի հավատարմագրման ընթացակարգերը մշակված են այնպես, որպեսզի խտրական բնույթ չունենան: Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման և համապատասխանության գնահատման մարմնի կողմից իրականացվող վճարման չափը և կարգերը տեղադրված են ԱՐՄՆԱԲ-ի www.armnab.am պաշտոնական կայքում և հասանելի են բոլոր շահագրգիռ մարմիններին:

7. ԱՐՄՆԱԲ-ի կողմից մատուցված ծառայությունները, վճարման չափը և աշխատանքների իրականացման ժամկետները կախված չեն համապատասխանության գնահատման մարմինների չափերից, նրանց որևէ խմբի կամ ասոցիացիայի անդամակցությունից, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրված լինելու քանակից:

Հավատարմագրման աշխատանքների վճարումն իրականացվում է կանխավճարով և կախված չէ գնահատման արդյունքներից:

8. Գնահատման ընթացքում անկախության, օբյեկտիվության և անկողմնակալության վրա ազդեցությունը բացառելու նպատակով գնահատման խումբ ձևավորելիս ԱՐՄՆԱԲ-ն ապահովում է հնարավոր շահերի բախման նույնականացումը՝ հավատարմագրման փորձագետների (գնահատողների), տեխնիկական գնահատողների/փորձագետների և հավատարմագրված/հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման մարմինների հետ գրությամբ պարզելով իրար հետ շահերի բախման առկայությունը/բացակայությունը:

9. Անկողմնակալությունն ապահովելու նպատակով ԱՐՄՆԱԲ-ը գնահատման խմբում և հավատարմագրման կոմիտեում ընդգրկված անձնակազմի նկատմամբ սահմանել է պահանջ, ըստ որի վերջին երեք տարվա ընթացքում ԱՐՄՆԱԲ-ի և հավատարմագրված/

հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման մարմնի միջև պետք է չլինեն

- աշխատանքային և/կամ ծառայություն մատուցելու վերաբերյալ համատեղ պայմանագրեր,
- ընդհանուր ղեկավարություն,
- ընդհանուր անշարժ գույք,
- հավատարմագրված/հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման մարմնի ղեկավարության և անձնակազմի հետ ընկերական ու ազգակցական կապեր, ինչպես նաև չտրամադրեն խորհրդատվություն հավատարմագրված/հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման մարմիններին:

10. ԱՐՄՆԱԲ-ն ապահովում է նաև իր անկողմնակալությունը որոշումների կայացման գործընթացում: Հաշվի առնելով գնահատման խմբի անդամների առաջարկությունները և հավատարմագրման կոմիտեի անդամների կարծիքները՝ որոշումը կայացվում է գնահատման հետ կապված ամբողջ տեղեկատվության հիման վրա առանց որևէ կողմնակի ազդեցության: Հավատարմագրման վերաբերյալ որոշումները կայացնում են այն անձինք, ովքեր ներգրավված չեն գնահատման գործընթացում:

11. ԱՐՄՆԱԲ-ը մշակել է «PR 4.4 Ռիսկերի կառավարում» ընթացակարգը, որի համաձայն նույնականացում, վերլուծում, գնահատում, մշակում, ընթացաստուգում (մոնիթորինգ) և փաստաթղթավորում է իր գործունեությունից ծագող ռիսկերը՝ ներառյալ իր անձնակազմի փոխհարաբերություններից առաջացող հակասությունները, որոնք կարող են ազդել անկողմնակալության վրա: Անկողմնակալության վրա ազդող ցանկացած ռիսկի նույնականացման դեպքում փաստաթղթավորվում են ռիսկերի վերացմանը կամ նվազեցմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև մնացորդային ռիսկերը:

12. ԱՐՄՆԱԲ-ի բարձրաստիճան ղեկավարությունը վերլուծում է ցանկացած մնացորդային ռիսկ՝ թույլատրելի մակարդակում լինելը որոշելու նպատակով: Եթե անկողմնակալության վրա ազդող ռիսկը նույնականացվում է որպես անթույլատրելի և

հնարավոր չէ նվազեցնել մինչև թույլատրելի մակարդակը, ապա ԱՐՄՆԱԲ-ը չի հավատարմագրում կամ դադարեցնում է հավատարմագրումը:

13. ԱՐՄՆԱԲ-ի անկողմնակալության վրա ազդող այն ռիսկերի նույնականացման դեպքում, որոնք կարող են կապված լինել սեփականության, ղեկավարման, կառավարման, անձնակազմի, ընդհանուր ռեսուրսների, ֆինանսների, պայմանագրերի, արտաքին ռեսուրսների ներգրավման (աութօրսինգ), վերապատրաստման, շուկայաբանության և միջնորդավճարի կամ նոր հայտատուներ ներգրավելու այլ խթանների հետ, ԱՐՄՆԱԲ-ը Հավատարմագրման խորհրդին է ներկայացնում ռիսկերի վերլուծության արդյունքները շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունն իրականացնելու նպատակով:

14. Հարակից մարմինների (էկոնոմիկայի նախարարություն, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ում և այլ պետական մարմիններում գործող համապատասխանության գնահատման մարմիններ) հետ անկողմնակալությունն ապահովվում է՝ հետևելով հետևյալ սկզբունքներին. ԱՐՄՆԱԲ-ի լիակատար տարանջատում և անկախություն ցանկացած այլ մարմնից՝ ներառյալ բարձրաստիճան ղեկավարությունը, որոշումներ կայացնողները և տեխնիկական անձնակազմը, արդյունավետ մեխանիզմների կիրառում ցանկացած հավատարմագրման գործունեության արդյունքի վրա որևէ ազդեցությունը կանխելու համար, ինչպես նաև նրանցից տարբերվող անվանումներ, պատկերանիշներ (լոգոտիպ) և նշաններ:

15. ԱՐՄՆԱԲ-ի բարձրաստիճան ղեկավարությունը պարտավորվում է ապահովել սույն քաղաքականությամբ սահմանված անկողմնակալությունը:

16. Սույն քաղաքականության վերանայումը կատարվում է ըստ անհրաժեշտության:

Տնօրեն՝ _____
(անվանատառը, ազգանունը, ստորագրությունը)

Տնօրենի տեղակալ՝ _____
(անվանատառը, ազգանունը, ստորագրությունը)

ԿՀ մենեջեր՝ _____
(անվանատառը, ազգանունը, ստորագրությունը)

Հավատարմագրման բաժնի պետ՝ _____
(անվանատառը, ազգանունը, ստորագրությունը)